Ոչ հերքեց, ոչ հաստատեց

ԱՄՆ Պետդեպարտամենտը, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը եւ «Amnesty International» իրավապաշտպան կազմակերպությունը Հայաստանում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության վիճակի մասին զեկույցներ հրապարակեցին, որոնցում կան բացասական գնահատականներ: Պատահակա՞ն էր արդյոք երեք հեղինակավոր կառույցների միաժամանակյա եւ համանման զեկույցների հրապարակումը՝ հարցրինք ՀՀ ԱԳ նախարարին: Էդ. Նալբանդյանը ոչ հերքեց, ոչ հաստատեց պատահականության հավանականությունը: «Աշխարհում ամեն բան էլ կարող է պատահել: Մենք պետք է լուրջ մոտենանք մեր բոլոր խնդիրներին: Զեկույցներում կարող են լինել լուրջ դիտարկումներ կամ հարցեր, որ սուր ձեւով են ներկայացված եւ արժանանում են մեր ուշադրությանը: Բայց, առաջին հերթին, այդ հարցերը մեր երկրի ժողովրդավարական զարգացման ճանապարհին մեր խնդիրն են, եւ մենք լուրջ քայլեր ենք ձեռնարկելու, որ իսկապես ժողովուրդը զգա, որ մարդու իրավունքները պաշտպանված են»: Էդ. Նալբանդյանը վստահ է, որ երբ նման զեկույցներում ասվում է՝ պետք է քաղաքական կամք դրսեւորել, նկատի է առնվում բոլոր ուժերի կողմից, այդ թվում՝ եւ անհատների: «Մարտի մեկը շատ ցավալի իրադարձություններ էին, բայց մենք բոլորս միասին պետք է այնպես անենք, որ այդ իրադարձությունները որեւէ անդրադարձ չունենան թե Ղարաբաղի գործընթացի վրա, թե երկրի զարգացման, կայունության եւ անվտանգության վրա, կարողանանք շրջել այդ էջը»,- ամփոփեց Էդ. Նալբանդյանը: